«Տարվա լավագույնները» մրցույթի մասնակցության նախագիծ

Հեղինակ՝ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի դասավանդող՝ Վարդան Կարապետյան /Պատմություն-հասարակագիտություն/

Անվանակարգ՝ հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչական լավագույն ծրագրի կամ նախաձեռնության համար

1. Ուսումնական նախագիծ՝ «Մեր գերդաստանը» ընտանեկան նախագիծ

Ընդհանուր նկարագիր՝
«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում այլընտրանքային հեղինակային կրթական ծրագիրն իրականացվում է նախագծային ուսուցման ձևով, որն ունի անընդհատ զարգացման միտումներ:
Հեղինակային կրթական ծրագրի բաղկացուցիչ մաս են կազմում նաև ընտանեկան նախագծերը, որոնք մտնում են սովորողի ընտանիք, «ապրում» ընտանիքում, միավորում են ընտանիքի անդամներին՝ ընտանիքը դարձնելով իրական-կենդանի դպրոց /ընտանեկան դպրոց/, արդյունքում նախագիծը զարգանում է ընտանիքում, դառնում հասուն, ընտանեկան իրական-կենդանի նախագիծ:
Ահա այդպիսի նախագիծ է «Մեր գերդաստանը» ընտանեկան նախագիծը…

Նպատակ և խնդիրներ՝

Նախագծի հիմնական նպատակն է՝ ընտանիքի անդամների հետ զրույցի միջոցով պարզել ընտանիքի անդամների-գերդաստանի-ազգանվան ծագումնաբանությունը, դրանք պատումների, տեսանյութերի, ձայնագրությունների տեսքով ներկայացնել ուսումնական բլոգներում:

Հիմնական խնդիրներ՝
-սովորողին և ծնողին տանել իրենց նախնիների, իրենց արմատների, ազգանվան ծագման-առաջացման պատմության հետքերով
-դրա շնորհիվ մեր սովորողները, ինչու չէ, նաև նրանց ծնողները հնարավորություն են ունենում լավագույնս ճանաչել իրենց տոհմական անցյալը
-նախագծի միջոցով ոչ միայն սովորողն է ճանաչում իր նախնիներին, նաև սովորողների ընտանեկան պատմությունների լուսաբանումների միջոցով մենք հնարավորություն ենք ունենում ճանաչելու մեր սեբաստացի ընտանիքներին

Ակնկալվող արդյունք՝
-սովորողները կենդանի ընտանեկան ուսուցում են իրականացնում, որում ընդգրկվում են նաև ընտանիքի անդամներ
-սովորողների պատրաստած տեսանյութերը, ձայնագրությունները, պատումները լուսաբանվում են ուսումնական բլոգներում, դպրոցի ենթակայքում, կրթահամալիրի կայքում, սոցիալական ցանցերում

-սովորողները ճանաչում են իրենց արմատները, որը հետագայում կփոխանցեն նաև իրենց հետնորդներին

Իրականացման քայլեր՝
-սովորողները զրուցում են իրենց ծնողների, տատիկ-պապիկների, հարազատների հետ, պարզում, թե իրենց նախնիները երբ, որտեղից են եկել, որտեղ են հաստատվել
-գերդաստանի և ազգանվան ծագման մասին պատմությունները գրի են առնում բլոգում, պատրաստում տեսանյութեր, ձայնագրություններ, հրապարակում բլոգում
-ընտանիքի անդամների հետ թերթում են իրենց ընտանեկան ալբոմները, ծնողների ցանկությամբ հետաքրքիր լուսանկարները հրապարակում նյութի, պատումի հետ

Շարունակականության ապահովում՝
Նախագիծը շարունակում է զարգանալ, գնալով ընդլայնվում է մասնակիցների, շահառուների քանակը, նախագծի շրջանակում իրենց տոհմական պատմություններով ներկայանում են նոր սովորողներ, նոր սեբաստացիներ

Նախագծի արդյունքների ամփոփիչ փաթեթ /իրականացված աշխատանքներ/՝

Ինչպես վերը նշեցի, «Մեր գերդաստանը» ընտանեկան նախագիծը դարձել է հասուն նախագիծ, ձեռք է բերել լայն տարածում և ճանաչում, իրականացվել է բավական ծավալուն աշխատանք /որը դեռ շարունակվում է/, ուստի անհրաժեշտություն եղավ արված աշխատանքներն ամփոփելու՝
«Մեր գերդաստանը» ընտանեկան նախագիծ /այստեղ կարող եք տեսնել 100-ից ավել մասնակիցների աշխատանքները/
«Մեր գերդաստանը՝ յուրաքանչյուր ընտանիքի նախագիծ /Դպիրյան հոդված/
«Մեր գերդաստանը՝ Մեդիագրադարանում
Կլոր սեղան՝ նախագծի առաջին փուլի ամփոփում